

## ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

«Հայ Աշուղներ» Գ. Ախվերդեանի. հրատարակութիւն  
օր. Մանէ Ախվերդեանի.

Անցեալ ամիս լոյս տեսաւ օր. Մանէ Ախվերդեանի հրատարակութեամբ Գէորգ Ախվերդեանի ժողոված և մինչև այժմ դեռ ոչ ամբողջովին յայտնի աշուղների երգերի ժողովածուն:

Գէորգ Ախվերդեանը, Խաչատուր Աբովեանը, Ստ. Նազարեանցը—սրանք մի յրջանի գործողներ են, Կովկասեան հայ գրականութեան նախահայրերն են, որ սկիզբ դրին մայրենի արդի լեզուի ստեղծագործութեան և գրականութեան ծագման: Ամեն մէկը իւր լուսման գցել է հայրենի ժողովրդի ինքնաճանաչութեան գանձարանը առանց գոռում-գոչիւնների, առանց սնափառ և մեծամիտ ինքնագովութեան և մարդատեցութեան հասցրած անհամբերողութեան, որ այնքան յատուկ է ներկայ թղուկ գործիչներին: Երբ որ մարդ կարգում է այս մարդկանց կենսագրութիւնը և ծանօթանում է նրանց զգացմունքների և մտքերի հետ՝ ակամայ խոնարհում է և ասում, որ այդ մարդիկ մաքուր և անպաճոյճ զգացմունքներով և խոր գիտակցութեամբ են սիրել իրանց հայրենիքը և ժողովուրդը, որ նրանց վրայ գերիշնող զգացմունքը չէ եղել միմեանց ոչնչացնելու և միմեանց միս ուտելու և անյագուրդ «Սսի» բաւականութիւն տալը:

Կարդացէք Աբովեանի հոմերական պարզութեամբ և անկեղծ վշտով գրած «Վէրք Հայաստանի» երկի յառաջաբանը, կարդացէք Նազարեանի կենսագրութիւնը և Ախվերդեանի մահուան բոպէին յիշած «Տէր ողորմեան» և կը համոզուէք, որ այդ մարդիկ ազատ են եղել մեր նեղսրտութիւնից, մեր կեղծիքից, որ նրանց սէրը սրտից բղխած բնական և խոր զգացմունք

էր, որ նրանք ժամանակաւոր փառքի, ի ցոյց մարդկանց և նիւթական շահի համար չէին գրում և գործում:

Քէնոբ Ախվերդեանը բժիշկ էր մասնագիտութեամբ, բայց սրբան մեծ է նրա արժանիքը մեր բանաւոր դասկանութեան համար: Նա առաջինը ուշադրութիւն դարձրեց մեր աղուղների երգերի վրայ, ժողովեց անագին նիւթ, հրատարակեց Սայաթ-Նովայի երգերը և կենսագրութիւնը: Նրանից յետոյ Միքայէլ Միանսարեանը լիովին իրագործեց Ախվերդեանի սկսածը իւր «Քնար Հայկական» միանգամայն թանկագին երգարանով: Այժմ Ախվերդեանի դուստրը գալիս է ամբողջացնելու և լոյս աշխարհ հանելու իւր անուանի հօր գործը: Այս բաւականին մեծ հատորի մէջ մտել են և այնպիսի աղուղների երգեր, որոնք արդէն յայտնի են, իսկ գրքի մեծ մասը բռնում են համարեա թէ բոլորովին անյայտ աղուղների գրուածներ: Բացի Նիրանու, Ազբար Ադամի, Թուրինջի և Շիրինի երգերը մնացածները համարեա անծանօթ աղուղներին են պատկանում: Այսպէս օրինակ ժողովածուի մէջ տեղ են գտել Արազլու Սարգսի, Արտեմի, Քեանհանի, Նալբանդօղլու, Ռոստոմ Մադաթովի, Սաղուբօղլու, Ալվա օղլու, Բուդաղ օղլու, Սէֆլի Չաքարի և այլոց ոտանաւորները: Գրքի մէջ չկայ ոչ միայն կենսագրական տեղեկութիւններ, այլ շատ աղուղների հօր անունը և ազգանունը յայտնի չէ: Չի կարելի ասել, որ այս անյայտ աղուղների երգերը առանձին ուժի կամ տաղանդի կնիք կրելիս լինին մինչև այսօր յայտնի աղուղների երգերի համեմատութեամբ: Աւելի ճիշտ է, որ սրանք ավելի թոյլ են քան Սայաթ Նովայի և Միսկին Բուրջու ու ուրիշների գրուածներից: Սակայն լեզուի ուսումնասիրութեան տեսակէտից և բանաւոր գրականութեան նշխարները կորստից ազատելու նկատմամբ օրիորդ Ախվերդեանի ձեռնարկութիւնը երախտագիտութեան արժանի գործ է:

Գար. Սնգիբարեանց

Н. МАРРЪ. Арабское извлечение изъ сирійской хроники Марибаса. С. Петербургъ 1902

Անխոնջ գիտնական և համակրելի հայագէտ Ն. Մառը շարունակ հետազօտելով և գիտնական ուղեորութիւններով